



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԵ.

7 ՄԱՐՏ 1875



ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1875



ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Յարութիւն Գ. Տառեան	պէջ	Ա. ԱՏԵՆԱԳԵՏ
Ռուսինեան	էֆէնտի	Բ. »
Յակոբ Կոստանդ	»	Գ. »
Ստեփան Փափազեանց	»	Ա. ԱՏԵՆԱԳՊԻ
Պօղոս Պառնասեան	»	Բ. »
Համբարձում Ալաճաճեան	»	Գ. »

ՁԵՌՆ ՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Խորէն Եպիսկոպոս Նար-Պէյ		ԱՏԵՆԱԳԵՏ
Տ. Յովհաննէս Բ. Մկրեան		
Առաքել Ալթուն Տիւրքի	էֆէնտի	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յակոբ Կոստանդ	էֆէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Ռուբէն Կիւմիւլէրտանեան	»	
Սիմոն Միքայէլեան	»	

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

Քրիստոստուր Ղազարոսեան	էֆէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Յակոբ Եէմէնիճեան	»	
Յովհաննէս Աղնաուրեան	»	

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տիգրան Եռսուֆեան	էֆէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Գէորգ Ստրամբաճեան	»	
Պօղոս Ժամակոչեան	»	

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յակոբ Քաղաղեան	էֆէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Համբարձում Ալաճաճեան	»	
Միքայէլ Մամիկոնեան	»	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Մատթէոս Վ. Իզմիրլեան		ԱՏԵՆԱԳԵՏ
Տ. Արիստակէս Բ. Մամբրէեան		
Յովսէփ Մալլըմեան	էֆէնտի	

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ռուսինեան	էֆէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Պօղոս Պառնասեան	»	
Ստեփան Փափազեանց	»	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խաչատուր Մխաբեան	էֆէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Կարապետ Իւթիւճեան	»	
Յարութիւն Մէրեճմ-Գուլի	»	

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԵ.

7 ՄԱՐՏ 1875

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ԳՐԻԳՈՐ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Առօրեայ կարգեալ)  
 ԱՏԵՆԱԳԵՏ. — ԲՈՒՍԻՆԵԱՆ ԷՖԷՆՏԻ (Բ. Ատենապետ)

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Թաղէոս Եպիսկ. Բ. Պ
2. Գրիգոր « Բ. Պ
3. Խորէն « Նար Պէյ
4. Գարեգին Վ. Թաթարեան Բ. 2
5. Մատթէոս « Իզմիրլեանց
6. Խորէն « Կիւմիւլեանց
7. Կարապետ « Սեբրեան Բ. 2
8. Ներսէս « Աղնանեան
9. Ամբրոսիոս « Իսկէնտերեանց
10. Հմայեակ « Դիմաքեան Բ. Պ
11. Յովհաննէս « Փափազեան Բ.
12. Յովհաննէս Բ. Մկրեան Բ.
13. Գէորգ « Արծրունի Բ. Պ
14. Գրիգոր « Աճէմեան
15. Խորէն « Փէշկովանեան Բ. Պ
16. Յարութիւն « Սեբրեան Բ. 2
17. Սուքիաս « Ստեփաննոսեան Բ. 2
18. Արիստակէս « Մամբրէեան
- 19.
- 20.

ԱՏԵՆԱԳԵՏԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

- Գրաստիտ, Կեաթի փաշա և  
 Գրաստիտի դուրս
21. Սենեքերիմ Մանուկեան Բ. 2
  - Բ. Բացակայութիւն առաջին
  - Բ. 2 Բացակայութիւն երկրորդ
  - Բ. Պ Բացակայութիւն բանաւոր  
 պատճառաւ
  - ՀԲ. Հրատարեալ

22. Պօղոս Ժամակոչեան
23. Յակոբ Ֆրէնկեան
24. Բարթող Բիւրբիպաշեան Բ. Պ
25. Գէորգ Ստրամբաճեան
26. Ռուսինեան
27. Պօղոս Պառնասեան
28. Եսայի Անուխեան
29. Մանուկ Արապեան Բ. Պ
30. Պօղոս ճիւղեան Բ. 2
31. Բարսէղ Հալաճեան Բ. 2
32. Գրիգոր Պերպերեան Բ. 2
33. Պետրոս Բերէսթեան
- 34.
- 35.
- 36.
- 37.

(Բ. Վիճակ)

(Բ. Վիճակ)

Պէշկովանց

38. Կարապետ Ս. Իւթիւճեան
39. Յարութիւն Մարգարեան
- 40.

Երեւան

41. Համբարձում Իփէկճեան
42. Խաչատուր Ղազարոսեան Բ.
43. Կարապետ Գ. Փափազեան Բ.
- 44.

Խոսկիտար Ս. Խաչ

45. Յովսէփ Ս. Մալլըմեան
46. Սեբրէ Պամաճեան
- 47.
- 48.

Խոսկիտար Ս. Կարապետ

49. Ալեքսան Սարգսեան Բ.
50. Միհրան Պաճճեան
51. Յովհաննէս ճիւղեան Բ.
- 52.

(Գ. Վիճակ)

Բերս

53. Գրիգոր Սէլիմեան Բ. 2
54. Տէրմաթ Մ. Էքսերճեան
55. Միքայէլ Մամիկոնեան
56. Արիկ Ունճեան Բ.
57. Ստեփան Խնդիրեան
58. Նշան Քաղաղեան Բ. 2
59. Մարտիրոս Յ. Տէլեան
- 60.
- 61.

Գրաստի փաշա

62.

Սիւնիք

63. Յակոբ Պ. Նորատուճեան Բ.
64. Յակոբ Կոստանդեան
65. Տիգրան Եռսուֆեան
66. Կարապետ Պ. Պերպերեան Բ.
- 67.

Պէշկովանց և Ղալաթի

68. Յարութիւն Մերեճմ-Գուլի Բ.

(Գ. Վիճակ)

Ղոզղոնճոնի և Իմաստիկ

69. Ստեփան Պերպերեան
70. Յովհաննէս Կասեան Բ.



Գրքագիր	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ
74. Մկրտիչ Մուրաթեան Բ.	Կարին
72. Կարապետ Շահպաղեան Բ.	104.
Նարյըզափոռ	Կոթայեան
75. Յակոբ Եմէնիճեան Բ.	102. Մարտի 8. Այվաթեան
Ենիմահալիկ Սամաթիոյ	Աղբիւրնոցոյիս
74. Օրսէն Խոճատարեան Բ.	105. Խաչատուր Կիւրճեան Բ.
Թոփղափոռ	Նիկոմիդիս
75.	104. Տեղբայր Կիւրճեան Բ. 2
Էլչոսի Ս. Եղիս և Ս. Աստուածամիտ	Ակն
76. Գարեգին Յ. Մելիքեան	105. Պետրոս Միսաքեան
Գոհարուշէշի	Հարախիսար
77.	106.
Հիսար և Պոյաճի գիւղ	Արարիկեր
78.	107. Կարապետ Խաչիկեան
Նոր գիւղ և Ս. Թեմիս	Բաղիշ
79. Ղազար Հովսեփեան	108. Պրոսպ
Պարսա	109. Բրեւոտտուր Ղազարոսեան
80. Մկրտիչ Գ. Էսաեան	Երկրորդիս
81. Յովհաննէս Կրճիկեան Բ.	110.
82.	Ամասիս
Քարապետիկոյի	111. Համբարձում Աւանճեան
85. Յարութիւն Գ. Տատեան Բ.	Բաղիշ
84. Յարութիւն Զէնճիրճեան Բ.	112. Յովհաննէս Ազնուուրեան Բ.
(Ե. Վիճակ)	Երկրորդիս
Սամաթիոյ	113.
85. Աւետիս Քոչեան Բ. 1	Մանգրլիս
86. Նազարէթ Շահպաղեան	Հանրն
87. Նշան Օսեան Բ. 2	115.
88. Յակոբ Քաղաղեան Բ.	Երզնիս և Բարերդ
89. Եղիազար Մելիքեան Բ. 2	11.
90.	Թերիքտաղ
91.	117. Տեղբայր Գ. Սինանեան Բ. 1
92.	Կեսարիս
93.	118. Մատթէոս Մ. Այվաթեան Բ. 1
94.	Խարերդ
95. Առաքել Ալթուն Տիւրքի Բ. 2	119. Յովհաննէս Երզնեան Բ.
96. Խաչատուր Պ. Միսաքեան	Պարսիկեր
97. Մարգիս Արապեան	120. Յովհաննէս Յովակիմեան
98. Սիմոն Միքայէլեան	
99. Ռեթէոս Պելիկեան	
400.	

Մոռ
121. Ստեփան Պ. Պ. Փափաղեանց
Տիպիկ
122. Պօղոս Մովսէսեան Բ. 2
Զոյթուն և Մարաշ
125.
Տրապիզոն
124. Մկրտիչ Կիւրճեան
Պարսա
123.
Տիգրանակերտ
126. Թադէոս Զեքերեան Բ. 2
Վան
127. Սիմոն Մարտուտեան Բ. 1
Աղթամար
128.
Հալիպ և Այնթապ
129.
Մեքսատիս
150.
Ռուստոյ
151.
Կարս
152. Աբրահամ Յ. Այվաթեան
Զոյթուն
155. Համբարձում Մարտիկեան
Գոհարտիս
154.
Ատան
155. Սիմոն Պ. Նորատուրեան
Մրդերդ
156. Մատթէոս Ալեքսանեան Բ.
Երզնա
157.
Մարաթիս
158.
Իզմիր
159.
Երզնա
140.

### ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Ժրագիր ազգային տրոց :
- Բ. Կարապետ զիւսանի Տեղեկագիրն ազգային վանքից համարադրութեանը վերաբերեալ :
- Գ. Փոփոխելի տրամադրութիւնը Սահմանադրութեան. — վերաբերել Յաննամարտի ծրագրը :

### ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատենը բացուեցաւ ճիշդ ժամը 7 ին ի ներկայութեան 38 երեսփոխանաց, որոց վերջին թիւը 47 ի հասաւ :

Ատենապետ էֆէնտին Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր կողմէ նամակ մը եկած ըլլալը ծանուցանելով ի լուր ժողովոյն կարգաց զայն, որոյ ահաւասիկ պատճէնը :

Վսեմափայլ Ատենապետ Ազգային ժողովոյ՝

Անձինս տկարութեան պատճառաւ այսօր ալ բացակայ գտնուել պարտաւորուելով ժողովին կը յանձնեմ ընտրել զմի ոք յեկեղեցական եղբարց ի նախագահութիւն ժողովին :

Կը խնդրեմ Ազգային պատկառելի ժողովէն որ ազգային Տրոց կամ Հանգանակութեան խնդիրն ի նկատի առնելով այսօր՝ այս կենսական խնդրոյն լուծում մը տալ բարեհաճի. զի ամենեցուն ակներեւ է որ սորա յետաձգումն ամենէն ծանրակշիռ հարուածն է Ազգային Վարչութեան, Երեսփոխան տեարց ազգասիրութեան վրայ վստահ կ'աղաչեմ զԱստուած որ պահպանէ զձեզ եւ զամենեւին ի խնամանչն ի ինչպէս իւրոց :

Միշտ ազօթարար առ Աստուած  
1875 Մարտ 7 Պ. Կ. ՆԵՐՍԵՍ ԱՐԵՅԳԻՍԿԱՆՈՍ Խասգիւղ

Յետ սոյն նամակի ընթացման՝ Ատենապետ էֆէնտինն առաջարկութեամբ եւ ժողովոյն հաւանութեամբ Տ. Գրիգոր Ս. Արքեպիսկոպոս՝ իբրեւ երկրագոյն յեպիսկոպոսունս առօրեայ նախագահ կարգեցաւ :

### Ճ.

Ատենապետ էֆէնտին նախընթաց նիստի ատենագրութեան վրայ ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխանները :

Իֆէնտին շ. էֆ. — Եջ 200 եւ սիւնակ Ա. իմ ատենաբանութեանս կարգը նօսր գրով յիշած բովանդատութեան առջին մասը կարգէն ետեւ նշանակուած է, եւ քիչ մը վարը դարձեալ նօսր գրով յիշած երկրորդ մասը կարգէն ետեւ նշանակուած եւ այնպէս խօսքս շարունակուած է : Կը խնդրեմ որ բացատրութեան համար ատենաբանի մը բերնէն կարգացուած ամեն ինչ ամբողջ եւ բառ առ բառ արձանագրուի. որպէս զի երեսփոխանք ատենագրութիւնն ընթերցած միջոցին զրտէն մէջ բերուած հատուածներուն ալ խելամուտ ըլլան եւ զանոնք ուրիշ տեղ փնտռելու աշխատութիւն չկրեն :

Եջ 201 եւ սիւնակ Բ. իմ ատենախօսութեանս վերջաբանը՝ որ կըսէ թէ « Սահմանադրութեան մէջ զնելու էր հիմնական սկզբունքը եւ ոչ թէ ճակատը », սխալ է. ես ըսած եմ. Սահմանադրութեան մէջ որքէն էն հիմնական սկզբունքը, և պէտք էր նորէն ճշտելու յիշել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. էֆ. — Եջ 195 եւ սիւնակ Բ. իմ խօսքս թերի արձանագրուած է, որ պիտի ըլլայ այսպէս. Կենսագրութեան նշանակել էլէ հանրաբնէր կամ հանրաբնէր բնութեան, կըսուի բնութեան. ինչ որ հանրաբնութեան պէտք է Վարչութեան և պարտաւորում մարտէ մը կամ երեսփոխանէ մը բնութեան :

Ատենագրութեան վրայ ուրիշ դիտողութեան







րան չէ, Վարչութեան ատեանը պէտք է պաշտպանել այդպիսի դատերը :

Ե.

Տեղեկութիւն Յարաբերութեան դիւանի

Ատեանապետ Էֆէնտին ժողովոյն ներկայեց Յարաբերութեան դիւանին կողմէ եկած տեղեկագիրը, զոր կարգաց նոյն դիւանի տեղեկաբեր Ալաճաճեան Էֆէնտին, եւ որոյ աւատիկ պատճէնը :

Տեղեկագիր Յարաբերութեան դիւանի  
ի վերայ հանրագրոց .

Յարաբերութեան դիւանը՝ պատկառելի ժողովէդ նախաքննութեան յանձնել հանրագրոց ծրար մը ընդունելով, տեսաւ որ երկու տեսակ են՝ յանուն ժողովրդեան տրուած :

Առաջինը՝ 1875 օգոստ. 3 թուականը կը կրէ, որով մեծ շնորհակալութիւն կը յայտնուի առ Ազգային պատկառելի ժողովը, որ «1870 էն հետէ օրինաւոր նիստերը շարունակելով եւ ազգային այլեւայլ պատահական մեծ խնդիրներով զբաղելէ զատ, Սահմանադրութեան քանի մը տրամադրութեանց վերաքննութեան ըստի պողականութիւնը տեսնելով՝ զայն կատարած եւ անոր գործադրութիւնն հրամայած եւ յանձնած է Ազգ. Վարչութեան Սահմանադրութիւնը անթերի գործադրելու համար . իսկ միւս կողմէն Սահմանադրութիւնը վերաքննելու համար հմուտ ու փորձառու անձերէ Յանձնաժողով մ'ալ կազմած է » :

Հանրագրոյն այս շնորհակալութիւնէն յետոյ «ցաւ կը յայտնէ նախորդ Վարչութեան դէմ եղած մասնաւոր ցոյցերուն, եւ մանաւանդ ընդհանուր ժողովոյ մէկ նստին մէջ Երեսփոխանաց ոմանց Սահմանադրութեան դէմ ըրած ակնաբխութեանց վրայ, եւ Սահմանադրութեան անթերի գործադրութիւնը կը պահանջէ, եւ կը յաւելու թէ գործադրութեան մէջ եթէ արդեւ կամ դժուարութիւն մը տեսնուի՝ Երեսփոխանական ժողովը միայն կրնայ այդ արդեւիքը կամ դժուարութիւնը բառնալ » :

Անս այս է առաջին հանրագրոյն իմաստը, որն որ նոյն ատենի անցից եւ պարագայից առթիւ մատուցուած է Ազգային ժողովոյդ :

Իսկ երկրորդ հանրագրոյն՝ զոր դարձեալ յանուն ժողովրդեան մատուցած են Ազգային ժողովոյդ, նախ ընդհանրապէս կը բողոքէ նախորդ Քաղաքական ժողովոյ դէմ, ըսելով թէ

«Իւր անփորձութեամբն ու ապիկարութեամբը յարքունուստ Ազգին շնորհուած դարաւոր մէկ քանի իրաւունքներն ու արտօնութիւնները վրտանդի ենթարկեց, թէ իւր անզգոյշ անխոհեմ եւ անհեռատես ընթացքովը գաւառաց եւ Պօլսոյ թաղերուն մէջ անսպառ խռովութիւն եւ գժուութիւն յարուցանելու առիթ ու պատճառ եղաւ, թէ՛ իւր ըրած մէկ քանի անարգար եւ անիրաւ որոշմամբը ազգային իշխանութեան ոյժը նոյն իսկ Ազգին առջեւ տկարացնելու պատճառ եղաւ, Սահմանադրութիւնն իւր ձեռքը գործիք ու խաղալիք ընելով, եւ թէ՛ Սահմանադրութեան դիմակին ներքեւ ճնշում ու բռնութիւն բանեցուց » :

Այս Հանրագրոյն նոյն Քաղ. ժողովոյ դէմ այսպէս ընդհանրապէս բողոքելէն յետոյ, կը մասնաւորէ բողոքը դարձեալ նոյն ժողովոյն անդամոց ոմանց դէմ ըսելով թէ « իրենց պաշտօնավարութեան միջոցին, ժողովուրդը Երիմեան սրբազանի դէմ գրգռելու ճիգեր ու փորձեր ըրին, եւ իրենց կըրոտ ու անհանգարտ բնաւորութեամբ նոյն իսկ Ազգ. ժողովոյ խորհրդարանը կուոյ ասպարէզ դարձնելով ժողովին պատկառանքը կորուսին . թէ՛ յուլիս 51 ի օրը զՄշեցիս բրօք Պատրիարքարան բերելով, կոխ ու անկարգութիւններ գործել տուին, որով վարչական իշխանութիւնն անպատուեցաւ, եւ թէ՛ նստած, ելած տեղերնին Երիմեան սրբազանի նկատմամբ ծանր հայհոյութիւններ ու նախատական խօսքեր ըրած են՝ նոյն իսկ մէկ երկու լրագրաց մէջ ալ վատահամբաւող յօդուածներ տպել տալով » : Բողոքոց շարքը կը վերջացնեն . « կրողքեմք, ըսելով, վեց անդամոց դէմ, որ իրենց գործած անկարգութիւններն եւ անարգարանալի զեղծումներն ծածկելու համար, կ'ամբաստանեն զսրբազան Պատրիարքը ( զԵրիմեան սրբազան ) իւր հրաժարմանէն յետոյ, մինչդեռ կրնային Նորին սրբազանութեան եւ իրենց պաշտօնավարութեան միջոցին օրինաւորապէս ամբաստանել զայն՝ եթէ հիմնաւոր եւ արդար ամբաստանութիւններ ունէին » :

Հանրագրոյն, ի վերջոյ յականէ յանուանէ կը մասնաւորէ Երիմեան Տ. Մատթէոս վարդապետն, եւ Վաղարոսեան Քրիստոստուր ու Փափագեան Ստեփան Էֆէնտինները, եւ նկատելով որ, կ'ըսէ, « սոքա են այս ամէն չարեաց պատճառ » . կը խնդրէ որ Ա. Երիմեան

սրբազանի հրաժարականը չընդունուի, Բ. Նորին սրբազանութեան ազգօգուտ առաջարկութիւնները ուշադրութեան առնուին, Գ. Սահմանադրութեան վերաքննութիւնը փութացուցուի, Դ. Քաղաքական ժողովոյ հրաժարականը չընդունուի, Ե. Երիմեան Մատթէոս վարդապետ, Ֆ. Վաղարոսեան եւ Ս. Փափագեան՝ զորս կ'ամբաստանեմք, կըսեն, այլ եւս ազգային պաշտօն բնաւ չվարեն :

Այս է անա երկրորդ հանրագրոյն ալ ամբողջ իմաստը :

Ինչպէս յայտնի է, Երիմեան սրբազանի եւ նախորդ Քաղաքական ժողովոյ հրաժարմանց խնդիրներն վերջացած են պատկառելի ժողովոյդ որոշմամբ . իսկ Սահմանադրութեան վերաքննութիւնը կատարուելու վրայ է, եւ անոր վերաբերեալ առաջարկութիւններն ալ ի հարկէ նկատողութեան կ'առնուին՝ եթէ ժողովը արժան դատէ . նախորդ Քաղաքական ժողովն իր համարատուութիւնը հրատարակած եւ Ազգային ժողովը զայն ի նախաքննութիւն յղած է արդէն . նոյնպէս յուլիս 51 ին ցաւալի անցքը արդէն պատկառելի ժողովը նկատողութեան առած եւ ազգային նախընթաց անցից հետ քննութեան համար յատկապէս Քննիչ մասնաժողով մը կարգած է :

Գալով Երիմեան Տ. Մատթէոս վարդապետ եւ Վաղարոսեան ու Փափագեան Էֆէնտիններու այլ եւս ազգային պաշտօն չվարելու խնդրոյն, ամենայն օրինաց ու արդարութեան հակառակ է՝ ընդունիլ այսպիսի խնդիր մը, առանց օրինաւոր ամբաստանագրոց, առանց դատական քննութեանց եւ վճռոց : Գիւանս Պատրիարքարանի դիւանատունէն ստուգեց որ ներկայ ազգային Վարչութիւնն արդէն 1874 յուլիս 17 թուականաւ ի պաշտօնէ լրագրաց միջոցաւ հրաւեր կարգացրէ է, որ ազգային պաշտօնատարաց անձին դէմ ամբաստանութիւն ունեցող եւ դատաստան պահանջողները Վարչութեան ներկայանան եւ օրինաւոր պայմանները լրացընելով դատաստանի մասնին յատկապէս կարգեալ Գատական մասնաժողովին առջեւ . սակայն ոչ ոք երեւան ելի է : Թէեւ ի սկզբան Քաղաքական ժողովոյ պաշտօնավարութեան քանի մը անձինք ներկայացրին, բայց սոքա ալ չեն կրցեր ըստ պահանջման ժողովոյն օրինաւոր կերպիւ իբրեւ ամբաստանող ներկայանալ . ինչպէս Գիւանս ստուգեց Քաղաքական ժողովոյ դիւանէն :

Հետեւաբար Յարաբերութեան դիւանս կ'եզրակացնէ թէ այս հանրագրոյնը մէջ Ազգային ժողովիդ նկատողութեանն արժանի խնդիր մը չէ մնացած . եւ թէ ազգային որ եւ է պաշտօնէի մը դէմ բողոք կամ ամբաստանութիւն պէտք է որ Ազգային Վարչութեան ըստ օրինի ներկայանայ առ ի քննութիւն :

7 մարտ 1875  
Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յարաբերութեան դիւանը մերժում կ'առաջարկէ. թէ որ խօսք ուղղչկայ, տեղեկագրին եզրակացութիւնը քուէի պիտի դնեմ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Պէտք է որ այդ տեղեկագրին Օրակարգն անցնի . որովհետեւ այսօր վիճաբանութիւն չկրնար ըլլալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովին կա՛քը դիտէ, պէտք է որ հարցնեմ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Կանոնադրութեան մը յօդուածոյն զօրութեամբ կ'առաջարկէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — ( Կանոնադրութեան 62 յօդուածը կ'արդար ) Այս յօդուածին զօրութեամբ . եւ թեր եւ դէմ մէյմէկ անգամ կըրնայ խօսուիլ . այնուհետեւ քուէի կը դնեմ :

ՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Խօսք ուղեցի այս խնդրոյն վրայ, ո՛չ թեր եւ ո՛չ դէմ խօսելու համար . այլ մի միայն կէտ մը կայ նրկատելի՛ զայն ցուցնելու համար : Արդէն դիտէ ժողովն, ինչպէս Յարաբերութեան դիւանն ալ իւր տեղեկագրին մէջ յիշեցուցած է թէ ասկէ առաջ ազգային նախընթաց անցից քննութեան համար Մասնաժողով մը կազմուած է, որ հարկաւ իւր քննութեան տեղեկագիրը պիտի բերէ ժողովին : Ես կարծեմ թէ այս տեսակ խնդիրներ մէկ անգամով լմնցնելու է . ըսել կ'ուզեմ թէ լաւ է սպասել որ այդ նախընթաց անցից Քննիչ մասնաժողովն իւր գործն աւարտէ եւ արդիւնքը հոս բերէ . եթէ ասանկ չընենք, եւ եթէ Յարաբերութեան դիւանին մերժման առաջարկութիւնն այսօրու ընէ ընդունինք, Քննիչ մասնաժողովոյ գործին կէս մասն որոշած պիտի ըլլանք, ո՛ր դիտէ թերեւս Քննիչ մասնաժողովոյ տեղեկագրին եկած ատեն այսօրուան մերժածնիս նորէն նկատողութեան առնելու եւ խնդիրը վերստին յուզելու պէտքն զգանք : Անոր համար կ'առաջարկեմ որ Քննիչ մասնաժողովոյ տեղեկագրին սպասուի :



ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը տեղեկաբեր Ալաճաճեան էֆէնտինն է :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Արդէն Յարաբերութեան դիւանն ալ մերժած չէ այն բաները , որոնք քննութեան կարօտ են , եւ անոնց համար Գննիչ մասնաժողով մը կազմուած ըլլալը իր տեղեկագրին մէջ նշանակած է . բայց մերժում առաջարկած է այն բաներուն համար , որոնք արդէն աւարտած են , նոյնպէս եւ այն ամբաստանութեան համար՝ որ ազգային երեսփոխանաց ոմանց դէմ եղած է նոյն հանրագրով . որովհետեւ Արշալուծինն պաշտօնական հրատարակութեամբ հրաւիրեր է արդէն բողոք ունեցողներն եւ ասոնցմէ ոչ մէկը օրինապէս բողոքող ներկայացեր է ցարդ : Ուստի այս ժողովին համար ուշադրութեան արժանի բաներ չեն այդ բողոքները , եւ այսուհետեւ ալ անոնք՝ որ այս կամ այն երեսփոխանին դէմ բողոք ունենան՝ կրնան ուղղակի Արշալուծեան դիմել , եւ ոչ թէ Ազգային ժողովին . ահա այս է մեր Գիււանին բերած եզրակացութեան իմաստը :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Իմ դիտողութիւնս մի միայն օրինաւորութեան կէտի մը վրայ էր եւ ոչ ուրիշ բան . քանի որ Մասնաժողով մը դրուած է այս տեսակ խնդրոց քննութեան պաշտօնով , պէտք է կ'ըսեմ՝ այս կէտն ալ անոր յանձնել եւ անոր տեղեկագրին սպասել :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կը կրկնեմ Եուսուֆեան էֆէնտինի առաջարկութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Փափաղեան էֆէնտինն է անձնական դէպի համար :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Յարաբերութեան դիւանի տեղեկագրին եզրակացութիւնը եթէ այդ հանրագրները նկատողութեան առնուել ըլլար , շատ բան ունէի խօսիլ՝ մանաւանդ Քաղաքական ժողովոյ պաշտօնավարութեանս եւ անձինս նկատմամբ հանրագրոց պարունակութեանց մասին . բայց ըստ որում Գիււանն իր եզրակացութեամբ այդ հանրագրոց մերժումը կ'առաջարկէ , ինձի հարկ չ'իտողութեան այժմ խօսիլ այդ նիւթոց վրայ . ուստի պիտի խօսիմ Եուսուֆեան էֆէնտինի առաջարկութեան դէմ եւ հակիրճ կերպով պիտի բացատրեմ եւ ցուցնեմ թէ իրօք բան մը կայ արդեօք որ իրաւունք տայ ժողովիս այդ ծանուցեալ հանրագրները յղել Գննիչ մասնաժողովին , ինչպէս կ'առաջարկէ ինք եւ իրեն հետ այլք ոմանք :

Յարաբերութեան դիւանն իւր տեղեկագրին մէջ հանրագրներուն պարունակութեանց գլխաւոր մասերը մի առ մի թուած է մանրամասնօրէն . — հոգ չէ , թող անգամ մ'ալ կրկնուած եւ արձանագրուած ըլլան , ինչպէս երբեմն մեծ խնամով եղած են . — այդ հանրագրոց ամբողջ պարունակութիւնն մինք արդէն ունինք ի ձեռին . արդ քննենք թէ ինչ կ'ըսեն ասոնք :

Հանրագրին մէկին գլխաւոր պարունակութիւնն ու իմաստն է Սահմանադրութեան անթերի գործադրութիւնը պահանջել . միթէ ասիկա այժմ յղման կարծա խնդիր մ'է . հիմա ալ Սահմանադրութիւնը գործադրելի կամ անգործադրելի նկատելու խնդիրներ կան արդեօք . կամ Սահմանադրութեան անթերի գործադրութեան հսկող ժողովս այս մասին տարակոյս ունի որ յղէ Գննիչ մասնաժողովին եւ անոր տեղեկագրին սպասէ . կարծեմ ժողովին իմաստութիւնը չ'ներէր այսպիսի խնդիր մը յղել Գննիչ մասնաժողովին :

Անցնինք միւս հանրագրին . որուն վրայ է խնդիրը : Այդ հանրագիրը նախ կ'առաջարկէ թէ Խրիմեան սրբազանի հրաժարականը չ'ընդունուի . միթէ յղելի խնդիր մ'է այս եւ ինչ պիտի սպասենք Մասնաժողովէն . . .

ՇԱՀՊԱՂԵԱՆ Ն. ԷՖ. — Փափաղեան էֆէնտինն անձնական դէպի համար պիտի խօսէր , բայց հեռացաւ իւր սահմանէն եւ անցեալ դէպերու մէջ մտաւ : Գիււանին ուշադրութիւնը կը հրաւիրեմ :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Դէմ խօսող եղաւ , ինչո՞ւ թեր խօսիլն արդիւլել կ'ուզէք :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Թէ որ դէմ խօսող եղաւ ըսելով Մամիկոնեան էֆէնտինն զիս ակնարկել տալ կ'ուզէ , կրկին կը յայտարարեմ թէ ես ոչ դէմ եւ ոչ թեր խօսելու մտադրութիւն ունեցայ . կը խնդրեմ որ այս դիտողութիւնս արձանագրուի :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Շատ լաւ , թող արձանագրուի . բայց մենք գիտենք որ դէմ խօսեցաք . իմ այս դիտողութիւնս ալ թող արձանագրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փափաղեան էֆէնտին , շարունակեցէք :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Որովհետեւ Եուսուֆեան էֆէնտինն առաջարկեց որ այս խնդիրը Գննիչ մասնաժողովին յղուի , ես ալ խօսք ա-

մի այդ առաջարկութեան դէմ , հասկցնելու համար թէ այս խնդիրը յղման արժէք չունի :

Արդէն հանրագրին մէկուն բովանդակ պարունակութիւնը եւ միւսին մէկ առաջարկութիւնը յառաջ բերելով ցուցի թէ ժողովին իմաստութեանը դէմ էր յղել զանոնք : Միւս հանրագիրը զեռ ուրիշ բաներ ալ կը պահանջէ . պէտք է որ անոնց վրայ ալ խօսիմ :

Կ'ըսէ թէ Քաղաքական ժողովին հրաժարականն ընդունուի . գիւանալ պէտք է թէ այս ակնարկած ժողովը նախորդն է , որ հրաժարած է արդէն , եւ նորը յաջորդած՝ տարիուկէսէ ի վեր պաշտօն կը վարէ . ասոր մէջ ինչ յղելի խնդիր կայ . Յարաբերութեան դիւանն արդէն թէ Խրիմեան սրբազանի եւ թէ նախորդ Քաղաքական ժողովոյ հրաժարմանց խնդիրներն ժողովոյդ որոշմամբ վերջացած ըլլալը կը հաստատէ :

Հանրագիրը կ'ըսէ . Սահմանադրութեան վերաքննութիւնը փութացուցուի : Արդէն ժողովիդ Օրակարգն է այդ խնդիրը եւ վիճաբանութիւնը շարունակութեան մէջ . ինչ կայ ուրեմն յղելի :

Հանրագիրը կ'ըսէ . Խրիմեան սրբազանին սահմանադրական դիտողութիւնները նկատողութեան առնուին : Այս ալ յղելու ինչ պէտք կայ . Իփէկճեան էֆէնտինն արդէն Խրիմեան սրբազանի այդ դիտողութեանց մասին անոր փաստարանութիւնն իւր վրայ առած է եւ կը կատարէ :

Այլ եւս ինչ կ'ըսէ այդ հանրագիրը , կ'ըսէ թէ Քաղաքական ժողովը , այսինքն մեր պաշտօնավարութեան ժամանակի ժողովը Ազգին իրաւունքները ոտնակոխ ընել տուաւ , Ազգին տունը քանդեց , անփորձ էր , ապիկար էր եւ այլ շատ բաներ : Յարաբերութեան դիւանն ինչ կը պատասխանէ ասոնց . կ'ըսէ թէ նախորդ Քաղաքական ժողովը իր համարատուութիւնն հրատարակած է արդէն եւ Ազգային ժողովը ալ ի նախաքննութիւն յղած է : Այդ համարատուութիւնն աշխարհի առջեւ է այսօր . Ազգին իրաւունքներն ոտնակոխ ընել տուած է թէ ընդհակառակն աւելի քաջաբար պաշտպանած է . . .

ՇԱՀՊԱՂԵԱՆ Ն. ԷՖ. — Դարձեալ խնդրէն կը շեղիք :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Ի՞նչն խնդրոյն մէջն եմ . մեր պաշտօնավարութեան դէմ հանրագրի

միջոցով խել մը բաներ այժմ կարդացուեցան . անոնց դէմ խօսելու եւ զմեզ պաշտպանելու թէեւ իրաւունք ունիմ , բայց ժողովին ժամերուն խնայելով , չեմ ուզեր այժմ երկար խօսիլ . մեր պաշտօնավարութեան համարատուութեան տեղեկագրիներն պէտք եղածն արդէն կը խօսիմ . ես ալ պիտի խօսիմ , երբ ժողովը զանոնք քննութեան առնուի : Արդ երբ Ազգային ժողովը արդէն նախաքննութեան յղած է այդ համարատուութիւնը , ուրեմն հանրագրին մէջ այս մասին ինչ խնդիր կը մնայ որ զայն ալ յղէք Գննիչ մասնաժողովին :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Մշեցւոց Պատրիարքարանի մէջ ըրած կուռոյն խնդիրն առանց քննութեան դեռ կը մնայ :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Մշեցւոց մասին հետ կը մտնանք յիշել Սամաթիացւոց եւ այլոց ի Պատրիարքարան խուժելը եւ ժողովարանէն դուրս ժողովական քաշելը ի ներկայութեան Խրիմեան Պատրիարքի եւ նորա անտարբեր մընաք . չէ մի որ ձեր իսկ առաջարկութեամբն այս ամէնը քննելու համար Մասնաժողով մը դրուեցաւ . ինչպէս Յարաբերութեան դիւանն ալ զայս կը յիշէ . կը մտնանք որ այդ քննութիւնն արդէն մենք պահանջած ենք նոյն իսկ մեր հրաժարագրովը . սպասեցէք ուրեմն որ քննութեան արդիւնքը զայ . ասոնց վրայ ալ այն ատեն կը խօսինք . եւ այն ատեն դուք խօսք անգամ չպիտի ունենաք ընելու :

( Ընդհատուի )

Թողէք , մի շիթէք գիս , որ խօսիմ , Երկու տարուոյ կը մօտենայ որ ամէն տեսակ շարախօսութեանց կը համբերենք , այս առթիւ ալ այս քանի մը բառերը չըսենք եւ լուռ կենանք :

Մինչեւ ցարդ ըսածներէս յայտնի կ'երեւի թէ միւս հանրագրին մէջ խնդիր մը չկայ որ Գննիչ մասնաժողովին յղուելու արժան ըլլայ : Մէկ առաջարկութիւն մ'ալ կայ այդ հանրագրին մէջ , այն է երեք անձանց համար այլեւս Ազգային պաշտօն չվարելու մասը : Ինչ զարմանալի բան , որ այդ անձինքը տակաւին պաշտօն կը վարեն , եւ Ազգային ժողովէջ պաշտօններ կ'ընդունին : Թերեւս ոմանք մտաբերեն որ , եթէ քննուելու արժանի խնդիր մը կայ , այս իսկ է : Բայց Յարաբերութեան դիւանն ինչ կը պատասխանէ այս մասին . կ'ըսէ թէ՛ Արշալուծիւնը պաշտօնական յայտարարութեամբ



հրաւէր կարգացեր է թէ ով որ ազգային պաշտօնէի մը դէմ բողոք ունի, օրինաւորապէս թող ներկայացնէ Աւարչութեան եւ դատ վարէ. բայց մինչեւ ցարդ բնաւ մէկը չէ երեւցեր:

Արդ այն երեք անձանց մէկն ես եմ. ուր էր զիս ամբաստանողը, թող երեւան ելնէր. ես պատրաստ էի դատուելու յատենի Աւարչութեան. որուն մինչեւ ցարդ սպասեցի, բայց ոչ ոք երեւան ելաւ: Թէեւ միւս կողմէն ամբաստանեալ համարուած անձինքը 5, 6, 7 եւ աւելի թիւերու հանուեցան. բայց մեր էր մէկ անձ որ կարող ըլլար ամբաստանող ներկայանալու անոնց դէմ: Ուր մնացին այդ հանրագիրն ստորագրողները կամ պաշտպանողները, անոնց թիւը 4000 ի եւ աւելի հազարներու հանողները, եւ 1000 ի իջեցնողներուն դէմ գանգատողները եւ այս բանս կարեւոր խնդիր մը համարողները. մինչեւ ցարդ ոչ թէ հազարներ, այլ 1 անձ չէ գտնուեր, որ այդ հանրագիրն տէր կանգնի . . .

(ԶԱՅՆԵՐ. — Ոմանք ինքքէն իւր շէշէ. — Այլք ինք ինք):

Այս բնին ազատ է, տեւորք, եւ այս ազատութեամբն իրաւունք ունիմ ըսել այն խօսքերը, որ երկար ատենէ ի վեր կըսպասէի ընել. այդ հանրագիրն ենթակայ եղող անձինքն առաջին օրէն զիտէին թէ ինչ արժէք ունի այն, եւ այս պատճառաւ անտարբեր էին, միայն կըսպասէին արդարութեան այս աւուր՝ որ ուրիշներն ալ իրենց պէս հասկնան անոր արժէքը: Յարաբերութեան դիւանը այդ անձնական խնդրոյ մասին ալ հանրագրին պարունակութիւնը մերժել կ'առաջարկէ. չեմ գիտեր թէ ժողովը պիտի ընդունի այդ առաջարկութիւնը: Բայց եթէ չընդունի եւ Քննիչ մասնաժողովին յղէ կամ անոր տեղեկագրին գալուն ալ օրաձգէ, ես իրաւունք կը համարիմ յայտարարել այժմէն թէ մենք մինչեւ ցարդ ամբաստանող մ'ունեցած չըլլալուս պաշտօնական հաստատութիւնն ստացանք այսօր. ինչպէս որ Յարաբերութեան դիւանը պաշտօնապէս ստուգելով Ազգային Աւարչութեան պաշտօնապէս յայտարարեց Ազգային ժողովի իր այսօրուան տեղեկագրովը. հետեւաբար այս պատճառաւ յապաղեցուցած իմ մէկ ամբաստանագիրս՝ որ պատրաստած եմ արդէն անձի մը դէմ, կրնամ ներկայացնել Աւարչութեան եւ դատ պահանջել անոր դէմ:

(ԶԱՅՆԵՐ. — Ինքքէն ինքքէն էն):

Յիշեցէք, տեւորք, որ այս իրաւունքը ինձի տուած է ժողովիդ կանոնադրութիւնը. անձնական այսպիսի մեծ դէպի մը համար որ տարիներ տեւեց, այսչափ հակիրճ պաշտպանութիւն մ'ալ ի հարկէ կը ներուի մեզ:

(ԶԱՅՆԵՐ. — Անյուսն զէպէ հոգի է ինչ ինք):

Որչափ որ Յարաբերութեան դիւանն մերժել կ'առաջարկէ մեր դէմ եղած հանրագրին պարունակութիւնները. բայց դիտել պէտք է թէ իր եզրակարգութեան մէջ չափաւորութեան ոգւով իր պաշտօնի սահմանէն ալ դուրս կ'ելլայ եւ կը յաւելու թէ. այսուհետեւ եթէ ազգային պաշտօնէի դէմ ամբաստանող ըլլայ՝ թող ուղղակի Աւարչութեան դիմէ եւ ոչ Ազգային ժողովիս:

Այդ ծանուցեալ հանրագրին բովանդակութիւնն մերժել առաջարկող եւ մեր դէմ ամբաստանող չըլլալը ստուգող եւ հաստատող Գիւանին եզրակարգութեան այս առաջարկութիւնն եթէ ժողովը ընդունի, ահա ես կը յայտարարեմ իմ եւ միւս ընկերացս կողմէն որ եթէ այսուհետեւ իսկ մէկն ելնէ եւ ամբաստանէ զմեզ այն մասին, պատրաստ եմք ներկայանալ Աւարչութեան ատենը, պահելով սակայն մեր ամբաստանելու իրաւունքն ալ, զոր ի գործ պիտի դնենք այսուհետեւ: Աւարչութիւնը թող դատէ, եւ իւր քննութեան արդիւնքը մատուցանէ Ազգային ժողովիդ, որ պէս զի յանցաւոր երեսփոխան մը Ազգային ժողովէդ ալ ճանչցուի եւ իր դատապարտութեան վճիռն ընդունի, եթէ անոր արժանի է:

Ահա այս էին իմ ըսելիքներս. ահա իմ վերջին խօսքս:


ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Փափագեան է՝ ֆէնտի տուած բացատրութիւնները զիս շատ գոհ ըրին, վասն զի Յարաբերութեան դիւանի տեղեկագրին վրայ ժողովին ընելու որոշումը Քննիչ մասնաժողովոյ տեղեկագրէն ետքի վերապահել ուղեւով, նպատակս ուրիշ բան չէր այլ միմիայն իւր իրաւասութիւնը չչլիթել: Արդ՝ Փափագեան է՝ ֆէնտի տուած բացատրութիւնները խիստ բացորոշ կերպիւ պարզեցին թէ Յարաբերութեան դիւանը ինքնին վերապահած է այս խնդրոյն մէջ Քննիչ մասնաժողովոյ պատկանեալ կէտերը, ուստի ես ալ կը ձայնակցիմ Յարաբերութեան դիւանի մերժման առաջարկութեանը:

ՇԱՀԱՋԱԶԵԱՆ Ն. ԷՅ. — Այս նիւթին վրայ խօսք առած եմ եւ կ'ուզեմ խօսիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այս մասին խօսքը վերջացած է, եւ ալ խօսք չկայ ուրիշին: Ըստ կանոնադրութեան պէտք է քուէի դնեմ Յարաբերութեան դիւանի տեղեկագրին եզրակարգութիւնը:

Մազլումեան է՝ ֆէնտիին խնդրանք յիշեալ եզրակարգութիւնը վերստին կարգացուեցաւ Գիւանին կողմէն:

Անիշապէս քուէի դրուելով, Մազլումեան է՝ ֆէնտիի 1 քուէին դէմ 28 քուէով Յարաբերութեան դիւանի տեղեկագրին եզրակարգութիւնն ընդունուեալս: Եւ Ատենապետ է՝ ֆէնտիին յայտարարեց թէ սոյն որոշման զօրութեամբ ժողովին եկած նախորդ հանրագրոց խնդիրը բոլորովին դուրս ելած եւ մերժուած է ժողովէն:



Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

ՄՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՏՐՈՑ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այժմ պիտի անցնինք Օրակարգին, որ է Մրագիր ազգային տրոց, Համարակալութեան դիւանն նամակաւ Մ. Գիւանիս հաղորդած է ազգային տրոց վրայ իր պատրաստած տեղեկագիրը. ահաւասիկ նոյն նամակը:

Վսեմափայլ Ատենապետ Ազգային ժողովոյ.

Ազգային կեդրոնական տրոց հաստատութեանը համար Քաղաքական ժողովոյ ներկայացուցած ծրագիրը, որ դիւանիս քննութեանը յանձնուած էր, ամենայն ուշադրութեամբ քննելէ ետեւ, արժան դատած բարեփոխութիւններն ընելով, կը փութայ զայն Մ. Գիւանիդ վերադարձնել, իւր բարեփոխեալ ծրագրին հետ միատեղ, Ազգային ժողովոյ յառաջիկայ ատենին ներկայացուելու համար:

Այս խնդրոյն համար դիւանիս Ատենապետը, տեղեկագրեր որոշուած ըլլալը ծանուցանելով:

7 Մարտ 1875 Մնամբ եւայլն Անդամք Համարակալութեան դիւանին Արեւ-Պէր Արեւ-Պէր ԳԵՈՐԿ ՍՏԵՄԱՐԱԶԵԱՆ ՏԻԳՐԱՆ ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ ԳՈՂՈՎ Է. ԺԱՄԱԿԱԶԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը հրաւիրեմ Համարակալութեան դիւանի տեղեկագրեր Եռուսթեան է՝ ֆէնտիին ի բեմն:

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Տեւորք. ազգային կեդրոնական տրոց բաշխման եւ հաւաքման մասին, Աւարչութեան Քաղաքական ժողովոյն կողմանէ Ազգային ժողովոյդ ներկայացած ծրագիրն, որ ըստ օրինի Գիւանիս քննութեանը յանձնուած էր, ուշի ուշով քննելէ ետեւ, կը փութամք յայտնել թէ Համարակալութեան դիւանս սկզբամբ անոր բովանդակութեան ընդունուելուն համամիտ գտնուած է. սակայն պարտք կը համարի մէկ քանի կէտերու վրայ պատշաճ դատած բարեփոխութիւններն Ազգային ժողովոյդ ուշադրութեանը յանձնել:

Նախ՝ տրոց բաշխումը միշտ 8 աստիճանի պահելով բարձրագոյն աստիճանն ըստ հաճոյից թողուլ: Իրաւ է որ ազգային տուրքն արդարութեամբ բաշխելու եւ անհատից կարողութեան չափը գտնելու համար իւրաքանչիւր ազգայնոց տարեկան վաստակը կամ ծախքն իբր բաշխման հիմ կրնար բռնուիլ. սակայն այս տեսակ մանրակրկիտ հաշիւներ դժուարին եւ մինչեւ իսկ անգործագրելի ըլլալուն համոզուած, անոնց դասակարգութեան հողը թաղերու մէջ կազմուելիք յանձնաժողովոց թողուիլ՝ խիստ խմաստուն խորհրդածութիւն մը կ'երեւի Գիւանիս:

Երկրորդ՝ գաւառաց մէջ հաստատուելու ազգային տրոց նկատմամբ, ըստ որում գաւառական տրոց աստիճաններու ցուցակը միահամուռ ներկայացած չէ, անհար է զանոնք իրարու հետ բաղդատելով միջին թիւ մը դրունել եւ բոլոր գաւառաց համար տրոց բաշխման աստիճանաց քանակութեան միօրինակ թիւ մը որոշել: Եւ որովհետեւ ըստ առաջարկութեան ծրագրին՝ քանի որ հաւաքման եղանակն ամեն գաւառ իրեն յարմար դատած կերպիւ պիտի տնօրինէ, Գիւանս կ'առաջարկէ որ անոր կանոնադրութեան 11 7. էն մինչեւ 15 7. յօդուածներն առ այժմ բոլորովին դուրս թողուին, եւ Քաղաքական ժողովը հրաւիրէ բոլոր գաւառներն որ իրենց ազգային տուրքը յառաջիկայ մայիսէն սկսեալ սահմանեն եւ հաւաքեն իրենց պիտոյից եւ ժողովրդեան կարողութեանը համեմատ տրոց քանակութեան չափը հիմնելով: Եւ նկատելով դարձեալ թէ գաւառաց կողմէ Պատրիարքարանի կեդրոնական սնտու-



կին վճարուելու արոց բաշխման եւ հաւաքման եղանակը կարենալ որոշելու համար Ազգային ժողովը պէտք է գիտնայ իւրաքանչիւր դաւաճութիւնը, ուստի դաւաճական վարչութիւնք իրենց ազգային տուրքը սահմանելէ ետեւ, պէտք է որ վճարողաց ցանկին մէկ օրինակն անմիջապէս կեդրոնական Վարչութեան հաղորդեն հանդերձ բաշխման եւ հաւաքման եղանակին վրայ ըրած անօրինութիւններն ունենալով, որոնք Քաղաքական ժողովէն քրննուելէն ետեւ, եթէ պատշաճ դատուի դաւաճական արոց բաշխման կամ հաւաքման եղանակին մէջ որեւիցէ փոփոխութիւն մը մըտցընել եւ ապագային համար միօրինակութեան մը վերածել, կեդրոնական Վարչութիւնը մասնաւոր ծրագրով մը առաջարկէ զայն Ազգային ժողովոյ :

Գիւանս նոյն կանոնադրութեան 37. յօդուածն որ ազգային տուրչն առանց վճարելու մեռնող ազգայնաց ժառանգորդներուն պարտական ըլլալուն կը պատկանի, բոլորովին բառնալ կ'առաջարկէ իրբեւ աւելորդ. վասն զի թէ ուղղակի եւ թէ անուղղակի ազգային արոց անվճար մնացած մասը միշտ մեռնողին ժառանգորդներէն պահանջելու իրաւունքն ունի արդէն Պատրիարքարանը : Եւ այս օրինակ պահանջները հաւաքելու համար յայտնի է թէ վարչութիւնք միշտ խոնհմութեամբ կը վարուին եւ մեծ զգուշութեամբ ի գործ կը դնեն այդ իրաւունքը :

Ան աւանդ, այս դիտար կէտերն են միայն՝ զոր Գիւանս պատշաճ դատեց այսպէս բարեփոխել միայն. իսկ միւս յօդուածոց վրայ ըրած փոքրիկ դիտողութիւնները հարկ չհամարիր տեղեկագրիս մէջ յիշատակել, մեծ կարեւորութիւն մը չունենալուն պատճառաւ. վասն զի նոքա ծրագրին ոգւոյն չհակառակելէ զատ, անոր դադարարն աւելի կը հաստատեն, ինչպէս որ յօդուած առ յօդուած կարդացած եւ բազմատեղ ժամանակ ակն յանդիման պիտի երեւնան :

Ի վերջոյ Գիւանս պարտք կը համարի սակեան ալ յիշեցնել թէ յայտնի է որ այս առաջին անգամու համար հաստատուած կանոնադրութիւնն որ հասուն խորհրդածութեամբ ալ խմբագրուի, միշտ կատարելագործուելու ենթակայ պիտի ըլլայ, քանի որ ազ-

գային տուրք վճարողաց կարողութեան աստիճաններու ճիշդ ցուցակ մը չունինք, եւ այդ ցուցակն ալ անկարելի է ունենալ, քանի որ Ազգային ժողովոյ որոշմամբ արոց հաւաքման եւ բաշխման որ եւ իցէ եղանակ մը տակաւին հաստատուած չէ :

Ուստի Քաղաքական ժողովոյ ներկայացուցած ծրագիրն առաջարկեալ բարեփոխութիւններով եւ կամ եթէ առանց բարեփոխութեան ալ ընդունուելու ըլլայ, Ազգային ժողովը նրկատելով որ արոց հաստատութենէն գոյանալու հասոյթին քանակութիւնը մինչեւ իսկ վեր ի վերոյ որոշելն անհնար ըլլալուն պատճառաւ չպիտի կարենայ զայն կեդրոնական անտուկին պիտեմէն ուղեցոյց բռնել այս տարուան համար, այլ պիտի հաստատէ զայն միմիայն իբրեւ ազգային ընդհանուր արոց օրէնսդէս հաստատութեան հանդէս մը յառաջիկայ տարուոյ համար գործադրելի, եւ հետզհետէ եղած փորձերով փոփոխելի, Համարակալութեան ղիւանս կը փութայ Վարչութեան ծրագիրն Ազգային ժողովոյ վաւերացման ներկայացնել հանդերձ իւր արժան գատած բարեփոխութեամբ :

Այժմ կը կարդամ Համարակալութեան ղիւանսին բարեփոխեալ ծրագիրը :

*Ծրագիր կանոնադրութեան կեդրոնական ընդհանուր արոց*

Յօդ. 1.— Ամեն ազգային անհատ որ չափահաս է եւ վաստակի ու շահու տէր եւ իւր բնակութիւնը Պօլիս հաստատած պարտական է կեդրոնական անտուկին տարեկան տուրք մը տալու :

Յօդ. 2.— Ազգային տուրքը ութն աստիճանի բաժնուած է :

Ա. 25 Բ. 50 Գ. 75 Դ. 100 Ե. 150 Զ. 200 Է. 300 Ը. ըստ հաճոյից :

Յօդ. 3.— Առ նուազն 75 դուրուշ տարեկան տուրք վճարողն ըստ Սահմանադրութեան երեսփոխանական ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունք կ'ունենայ :

Յօդ. 4.— Տրոց բաշխումը կատարելու համար ամեն Թաղական խորհուրդ իւր մէջէն եւ զրոյն այս մասին յարմարութիւն ունեցող անձինքներէ բաղկացեալ յանձնաժողով մը կը կազմէ, որն որ կը հրաւիրէ նոյն թաղին մէջ բնակութիւն հաստատող եւ տուրք տալու կարող-

ղութիւն ունեցող ազգայինները եւ հետեւին համահաճութեամբ կ'որոշէ տալու տուրքին որքանութիւնը. զորն որ պիտի հաստատէ նոյն ազգայինը իւր ստորադրութեամբը յատուկ տեսակի մը մէջ :

Յօդ. 5.— Յիշեալ յանձնաժողովը 15 օր պայմանաժամ կուտայ իւրաքանչիւր ազգայնոյ ի խորհրդարան ներկայանալու համար, եւ պայմանաժամուն լրանալէն ետքը չներկայացողներուն իրենց աստիճանին համեմատ վճարելու տուրքին քանակութիւնը յանձնաժողովը կ'որոշէ եւ մասնաւոր նամակաւ իրեն կը հաղորդէ, որ եթէ դիտողութիւն մը ունի, 15 օրուան մէջ հաղորդէ յանձնաժողովին. այս պայմանաժամը լրանալէն ետքը, եղած դիտողութիւնները չը պիտի ընդունուին այն տարուան համար :

Յօդ. 6.— Տարեկան տուրքը մէկ անգամէն չկրցող վճարողները դիւրութեան համար, վեց ամիսն անգամ մը վեցամսեայ բաժիններն կանխիկ վճարելով ալ կրնան հատուցանել :

Յօդ. 7.— Քաղաքական գործոյ մը համար Պատրիարքարան կամ Թաղական խորհուրդներուն դիմող ազգայինէ մը տարին լրացած եւ երեք անգամ ուղուած լայց տակաւին անվճար ձգուած ու դիզուած տուրքերն առնուելէն ի զատ նաեւ սոյն արոց վրայ տարեկան 10 առ հարիւր տուղանք պիտի պահանջուի եւ առնուի, եւ ետքը նոյն անձին գործը տեսնուի :

Յօդ. 8.— Տուրքին տրուած ըլլալը պիտի հաստատուի վճարողին քովը գտնուած ընկալագրէն, որ ստորագրեալ պիտի ըլլայ կեդրոնական անտուկին գանձապահէն եւ հաւաքիչէն եթէ հաւաքիչ ձեռք է առնուած, եւ Պատրիարքարանի կնքով վաւերացեալ :

Յօդ. 9.— Պատրիարքարանի ազգահամարի գրասենեակը պարտաւորեալ է ըստ Սահմանադրութեան ամեն տարի Թաղական խորհուրդներէն ստուգել իրենց թաղին մէջ նոր եկողները եւ ուրիշ գալերին, գացողները եւ ուր երթալին, նոր շահու տէր եղողները, իրենց աստիճանին փոփոխութիւն ուղղողները եւ վերջապէս վախճանողները եւ ծնունդները :

Յօդ. 10.— Տուրքը Վարչութեան կողմէ ընտրեալ յատուկ հաւաքիչներու ձեռք պիտի հաւաքուի. հաւաքուած գումարին վրայ 5 էն մինչեւ 10 առ հարիւր իրենց տրուելով իրր ծախք եւ վարձատրութիւն. իսկ երբ ուղղակի Պատրիարքարանի մէջ առնուի, որ եւ է ծախք տեղի չպիտի ունենայ :

Յօդ. 11.— Չանազան տեղեր պանդխտող ազգայինը ընտանեօք բնակութիւն հաստատած տեղի ազգային անտուկին կը վճարէ իր տարեկան տուրքը :

Յօդ. 12.— Գաւառներու կողմէն կեդրոնական անտուկին տրուելու տուրքը, Ազգային ժողովոյ կողմէն պիտի սահմանուի, երբ գաւառական անտուկներուն իրենց համար հաւաքած արոց քանակութիւնն իմացուի, եւ այն ատեն ամեն տարի գաւառական վարչութիւնք պիտի զրկեն զայն ի Պատրիարքարան փոխանակ ընկալագրեր ընդունելով կեդրոնական անտուկի գանձապահէն ստորագրեալ եւ Տնտեսական խորհրդոյ եւ Պատրիարքարանի կընիքներով վաւերացեալ :

7 մարտ 1875

Անդամք Համարակալութեան ղիւանսին  
Արէն-Պէր Արէն-Պէր  
ԳԵՈՐԳ ՍՏԵՓԱՆՆԻՍԻԱՆ ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ  
ԳՕԴՈՍ Է. ԺԱՄԱԿՈՉԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.— Խօսքը Քաղաքական ժողովոյ տեղեկարեր կոստանդ էֆէնտիին է :

ԿՈՍՏԱՆԻ Յ. ԷՅ.— Վարչութեան Քաղաքական ժողովը կ'ընդունի Համարակալութեան ղիւանսին բերած դիտողութիւնները գաւառական ազգային արոց մասին, ժողովը ժամափաճառ չընելու համար, իսկ գալով արոց բաշխման աստիճանացոյցին՝ որոյ Յ7. կարգըն ըստ հաճոյից թողուլ կ'առաջարկէ, կը պատասխանեմ թէ տուրքն որ պարտք մ'է, պէտք է որոշ ըլլայ. եթէ մէկ կարգն ըստ հաճոյից ըլլայ ինչու միւսներն ալ չըլլան. պարտեաց եւ իրաւանց հաւասարութեան սկզբունքը կը պահանջէ որ այս կէտին մէջ ալ հաւասարութիւն լինի, եւ տուրքը չէ թէ ըստ հաճոյից, այլ որոշեալ ըլլայ, վասն զի տուրքը նուէր չէ, այլ պարտք մ'է : Պիտի ըսուի թերեւս թէ հարուստ անձինք կան, որ 500 դրշ. էն աւելի կրնան եւ պատրաստ են տալ, ինչու արդիւնք. այս առարկութեան կը պատասխանեմ թէ հանգանակութիւնները չենք կրնար վերցընել. մեր Ազգին պէտքերը շատ են, եւ մեծատունները կրնան Ազգին օգնել այդ զանազան պէտքերուն մէջ. իսկ տուրքն որովհետեւ ազգային մշտնջեան պիտոյից եւ որոշեալ ծախսը համար մշտնջեանական աղբիւր մը պիտի ըլլայ, պէտք է որ իւրաքանչիւր անհատ իւր կարողութեան չափով վճարելու պարտականու-



թիւնը կատարէ . ուստի Վարչութիւնն ալ այս պատճառաւ է որ պատշաճ չդատեց ըստ հաճոյից կարգ մը դէնք . ուստի ժողովոյն ուշադրութեանը կը ներկայացնեմ այս կէտը :

Ասկէ դատ՝ Համարակալութեան ղիւանը կ'առաջարկէ որ քաղաքական գործով Պատրիարքարան եկող գացողներէն անոնց տուրքը միայն պահանջուի եւ անուրի, որոնց որ երեք անգամ ազգարարութիւն եղած եւ անխելի մնացած է : Այս կէտին մէջ ալ շատ դժուարութիւններ կան . ազգարարութիւն ըսուածը հարկաւ տպեալ տոմսակներով պիտի ըլլայ , ասոնք տըպել տալու , լեցնելու եւ ցրուելու համար 20 — 23 հազար դր . ի ծախուց գուռ մը պիտի բացուի . եւ երբ այս կէտն օրինաց կարգն անցնի , ամէն մարդ պիտի սպասէ որ վերջին ազգարարութիւնն ըլլայ . ասով գէշ օրինակ մը տըւած կ'ըլլանք . եւ ենթադրելով որ 8 հազար հոգի ըլլան իրենց տուրքը ժամանակին չտուող , պիտի ստիպուինք 24 հազար տոմսակ տպել տալ , պաշտօնեաներ յատկացնել որ զանոնք լեցնեն եւ ցրուեն , եւ այս պատճառաւ պարագայք եւ երթեւեկութիւնք տեղի պիտի ունենան : Հետեւապէս այս կէտն ալ վերջնել պէտք է եւ օրէնքով իրաւունք չտալ անոնց՝ որ իրենց տուրքը ժամանակին վճարել չեն ուզեր . եւ արդէն հաստատելի օրէնքը իրր ազգարարութիւն կրնայ համարուիլ : Հաւաքման եղանակին գալով , Վարչութիւնն ընդհանուր հաւաքչի յանձնել արժան դատած է . կրնայ ասկէ տարբեր կերպ մ'ալ մտածուիլ , Վարչութեան գործն է այսպիսի կէտերը անօրինել ինչպէս որ արժան դատէ , որովհետեւ ասոնք օրինական կէտեր չեն , այլ կանոնական :

Կը մնայ 10-րդ յօդուածն՝ որ կ'ըսէ թէ հարբերին 5 էն մինչեւ 10 հաւաքչին տրուի իբր ծախք եւ վարձատրութիւն . իսկ երբ ուղղակի Պատրիարքարանի մէջ առնուի , որ եւ է ծախք տեղի չունենայ : Ահա շրջութեան շատն ասկէ կը ծագի . ոմանք հաւաքչին կուտան եւ ոմանք գործով Պատրիարքարան եկած ատեն կը վճարեն . որ եւ իցէ գործ մը եթէ երկու պատասխանատու ունենայ ոչ մէկն եւ ոչ միւսը չկրնար ըստ օրինի իւր պարտքը կատարել . ասոր համար Վարչութիւնը կ'ուզէ որ ընդհանուր հաւաքչի մը միջոցաւ ըլլայ եւ նա պատասխանատու մնայ : Եւ եթէ մէկը գործով Պատրիարքարան եկած ատեն տուրքը վճարած չըլլայ՝

հաւաքչին խրկել որ վճարելէ ետեւ տոմսակը ասնէ եւ այնպէս ներկայանայ :

Այս միջոցին ատենը քառորդ մը դադար առաւ , եւ յետոյ վերատին բացուելով շարունակեց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ. — Տրոց խնդրոյն վրայ խօսք չտուած Քրիստոստուր էֆէնտիին կողմէն առաջարկութիւն մը կայ , զայն պիտի հաղորդեմ ժողովին : Կ'ըսէ թէ ներկայ ամսոյս վերջը ժողովին նիստերը պիտի փակուին եւ Ձատկէն ետեւ Մայիսին սկիզբը նորէն պիտի բացուին ըստ Կանոնադրութեան , եւ եթէ 15 օրէն ըլլալու պայմանաւ ժողովին նիստը շարունակուի , մինչեւ Ձատիկ մէկ նիստ մը միայն կրնանք ունենալ , եւ քանի որ ստիպողական խնդիրներ ունինք , ինչպէս Տրոց եւ Վերաքննութեան խնդիրները , կ'առաջարկէ որ ասկէ մինչեւ Ձատիկ ամեն ուրբաթ նիստ ըլլայ , եթէ ոչ՝ առ ձեռն եղած ստիպողական խնդիրները կը մնանք Դիւանը համամիտ այս առաջարկութեան , եւ եթէ խօսք ուղող չըկայ քուէի կը դնեմ :

ԿՈՍՏԱՆԴ 8. ԷՅԹ. — Շատ փափաքելի էր ընդունիլ Քրիստոստուր էֆէնտիի առաջարկութիւնը . սակայն իրրեւ անդամ Քաղաքական ժողովոյ հարկ կը համարիմ յայտնել թէ ըստ որում Քաղաքական ժողովն ալ ստիպուած է շաբաթն անգամ մը նիստ ընել՝ եւ այն ալ ուրբաթ օրերը միայն , անկարելի է մեզ շաբաթն երկու անգամ նիստերու ներկայ գտնուիլ . ուստի թէ որ կարելի է Ազգային ժողովոյ նիստը դարձեալ ըստ առաջնոյն 15 օրն անգամ մը շարունակուի :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅԹ. — Ես ի սկզբան համամիտ էի Քրիստոստուր էֆէնտիի առաջարկութեան , բայց Կոստանդ էֆէնտիի դիտողութեան վրայ փոխուեցաւ կարծիքս . երեսփոխանաց մէկ մասը Քաղաքական ժողովոյ ալ անդամ են , քանի որ անկարելի կը թուի նոցա շաբաթն երկու անգամ նիստերու ներկայանալ , պէտք է ըստ առաջնոյն շարունակել նաեւ մինչեւ Ձատիկ . եւ ինչ որ ուրիշ սահմանադրական ազգաց խորհրդարանները կ'ընեն , մեք ալ այնպէս պէտք է վարուինք , այսինքն ստիպողական գործերէն որքան որ կարելի է լինցնել , զայն կը լըմընցնեն , եւ մնացորդը յաջորդ բացման կը թողուն , եւ այս պարագայիս մէջ կորուստնիս միայն մէկ ամիս մը պիտի ըլլայ իրրեւ Ձատկական դադար :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՅԹ. — Քրիստոստուր էֆէնտիին ըրած առաջարկութեանը համար շընորհակալութիւն կը յայտնեմ , որ ազգային գործոց շուտով լինալուն փափաք կը ցուցնէ . միւս կողմէ Քաղաքական ժողովոյ անդամոց դիտողութիւնն ալ թէեւ իրաւացի է , սակայն մինչեւ ցարդ եղած փորձերը կը հաւաստեն որ վերաքննութեան խնդիր մ'ունինք՝ որուն կ'ըզբաղինք այսքան ժամանակէ հետէ , եւ դեռ մէկ յօդուած մը լինցուցած չենք , օրերը չեն ներեր ըսելով օրեր պիտի անցնին , այսօրվան սերտածնիս պիտի մոռցուին , եւ ետքը նորէն դասի պիտի սկսինք : Անոր համար եթէ կարելի է Քաղաքական ժողովն ուրիշ օրեր իւր նիստն ընել բարեհաճի , եւ ժողովս ամեն ուրբաթ նիստ ընէ մինչեւ Ձատիկ , գոնէ սա տրոց խնդիրն որոշուի լինայ :

ԿՈՍՏԱՆԴ 8. ԷՅԹ. — Քաղաքական ժողովը չկրնար ուրբաթէն դատ ուրիշ օրեր նիստ ընել , եւ իւր նիստերուն Սրբազան Նախագահին ներկայութիւնն ալ պէտք է : Եթէ Ազգային ժողովն ստիպողական կը տեսնէ ամեն ուրբաթ նիստ ընել , եւ որովհետեւ մեր ներկայութիւնն ալ կարեւոր չէ , թող որոշէ որ Սրբազան Պատրիարքը Քաղաքական ժողովին նախագահէ , եւ ինք առժամանակեայ նախագահի մը միջոցաւ մինչեւ Ձատիկ իւր նիստերը շարունակէ :

ԷՔՕԷՐՃԵԱՆ Տ. ԷՅԹ. — Կը ձայնակցիմ Շահապետի էֆէնտիին , պէտք է որ 8 օրն անգամ մը նիստ ըլլայ . փասն զի Օրակարգին մէջ այնպիսի ստիպողական խնդիրներ կան , որոնց լուծումն անհրաժեշտ է . այսպիսի պարագայի մէջ զոհողութիւն ընել պէտք է ոչ միայն շաբաթը մէկ օր , այլ եւ եթէ հարկն ստիպէ կիրակի օրերն ալ նիստ ընելու է :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅԹ. — Եթէ երկու երեք նստերով Օրակարգին մէջ եղած խնդիրները պիտի կրնան լուծուիլ , ես կ'առաջարկեմ որ զիչերներն ալ հոս մնանք . կ'ազատեմ , պարագայ տեղը ժամանակ չանցունենք , եւ փոխանակ այս խօսքերով երկու ընելու , Օրակարգին մէջ եղած ստիպողական խնդրոց մէկը որ լուծման վիճակին հասած է արդէն , աշխատինք լինցընելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ. — Ալ խօսք չկայ , թեր ու դէմ երկու անգամ խօսուեցաւ . հիմա քուէի պիտի դնեմ Քրիստոստուր էֆէնտիի ա-

ռաջարկութիւնը՝ զոր եւ Դիւանը կ'իւրացնէ , մինչեւ Ձատիկ ամեն ուրբաթ նիստ ընելու համար :

Ձայն ըսելով Ատենապետ էֆէնտիին քուէի գրաւ յիշեալ առաջարկութիւնը , եւ ժողովն 11 ի դէմ 15 ձայնով ԶԸՆԴՈՒՆԵՑ զայն . եւ Օրակարգին անցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ. — Խօսքն իրիկհետեան էֆէնտիին է տրոց ծրագրին վրայ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՅԹ. — Ինչպէս որ Կանոնադրութիւնը կը տրամադրէ , երբ օրինական ծրագիր մը ժողովին կը ներկայանայ , նախ անոր ընդհանրութեան վրայ կ'ըլլայ վիճաբանութիւնը , եւ յետոյ գոնէ շաբաթ մը միջոցով անոր յօդուածոցը կ'անցնուի : Աւստի ստիպուած եմ ծրագրին ընդհանրութեան վրայ խիստ կարճատեղ դիտողութիւն մ'ընել :

Ստոյգ է որ ամեն ազգաց մէջ ընդհանուր տրոց բաշխման հիմ կը բռնուի իւրաքանչիւր անհատի վաստակին կամ ծախուց քանակութիւնը : մեք այդ բանը չպիտի կրնանք ընել ոչ Կ. Պօլսոյ եւ ոչ գաւառաց մէջ . ինչ պիտի ընենք ուրեմն . հարկաւ հաւանական թիւեր պիտի ընդունինք , քանի որ տրոց բաշխման հիմն արդար եւ օրինաւոր կերպով չենք կրնար որոշել . եւ ինչպէս մեք հոս չենք կրնար , նոյնպէս գաւառներն ալ չեն կրնար . ուրեմն քանի որ հաւանական թիւերով գոհ պիտի ըլլանք՝ առանց դաւառները դուրս ձգելու ընդհանուր կերպով ընդունելու ենք այդ ծրագիրը : Այսու ամենայնիւ ներում կը խնդրեմ ծրագրին վրայ փոքրիկ դիտողութիւն մ'ընելու : Այս ծրագրին ամբողջ եւ կատարեալ չէ ըստ իս . այսինքն՝ իւր մէջ չպարունակէր գաւառներէն Կեդրոնական սնտուկին գալիք տուրքը , նոյնպէս թաղային տուրքը . Վարչութիւնն իւր ուշադրութեան առարկայ ըրեր է միայն կեդրոնական տուրքը . չենք կրնար ըսել թէ ինչպէ կատարեալ ծրագիր չէ բերած . միայն կ'ըսենք թէ թերի է եւ լաւ կ'ընէ Վարչութիւնն եթէ ջանայ այս երկու կէտերուն համար ալ պէտք եղած ծրագիրները բերել , ինչպէս որ բերած է ներկայ ծրագիրը :

Քալով Համարակալութեան ղիւանին առաջարկած բարեփոխութեանց կէտերուն , որոնց մէկն է գաւառային տրոց վերաբերեալ յօդուածները դուրս ձգելն , որ օրինաւոր չէ .



աւելի օրինաւոր է Վարչութեան շինածը : Քաղաքական ժողովոյ կողմէն դիտողութիւն եղաւ աստիճանաց ցուցակին նկատմամբ Համարակալութեան զիւանին առաջարկած բարեփոխութեան մասին թէ բարձրագոյն աստիճանին բաց թողուելուն դէմ է : այս դիտողութեան ես ալ համամիտ եմ եւ կ'ուզեմ որ 8 աստիճանն ինչպէս որ է ծրագրին մէջ անփոփոխ մնայ :

Ծրագրին 47. յօդուածին մէջ արգելօք կարեւոր չէր չքաւորներուն համար բացատրութիւն մը տալ :

ԿՈՍԱՆԻ Թ. ԷՖ. — Կարծեմ թէ չտարբերէ բառերը կը մեկնեն ձեր բնածը :

ԻՓԷԿՃԵԱՆ Լ. ԷՖ. — Այո՛, այդ բացատրութիւնը կը գոհացնէ զիս : Համարակալութեան զիւանը ծրագրին 87. յօդուածը դուրս ձգած է իբրեւ աւելորդ : իրաւացի կը համարիմ զայդ : Ծրագրին 87. յօդուածին մէջ տուածները դրած է Վարչութիւնը. այդ ալ աւելորդ է եւ պէտք է վերցնել նոյն բառը : մանաւանդ որ Կոստանդ էֆէնտին էր որ պահ մը առաջ բացատրեց թէ ծախուց կարօտ է մարդ զրկել եւայլն . ուստի լաւ կ'ըլլայ տուածների կէտը վերցնել, չվճարողին գործը պատահած ատեն վճարել տալով գոհ ըլլալ առ այժմ, եւ տուածները ետքի ձգել :

Վերջացնելով դիտողութիւնս կ'առաջարկեմ որ Վարչութեան ներկայացուցած ծրագրին բովանդակութիւնն առանց երկար ժամանակ կորսնցնելու քուէի դրուի, եւ եթէ երկու շաբաթէն նիստ մ'ալ ըլլայ՝ անմիջապէս յօդուածոց քննութեան անցնուի, որպէս զի ժողովոյս տարեկան նիստը չգոցուած այս խընդիրը վերջանայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Միսաքեան էֆէնտինն է :

ՄԻՍԱՔԵԱՆ Խ. ԷՖ. — Վարչական մը առաջ մեր մեծ. ընկերները բարձր կարգի անձանց արոց վրայ խօսելով ըստ հո՛նքս բառը կ'ըսէին . անոնց համար՝ որ կարողութեան տէր են, օրէնք գնել հարկ չեմ տեսներ : Ես կ'իջնեմ 25 դուրուշին . ստորին կարգն է 25 դուրուշ . ես այնպէս կը կարծեմ թէ տուրք տուողն անշուշտ վաստակի տէր պիտի ըլլայ, բայց ծրագիրը շինողները կերեւնայ թէ մոտցեր են Ազգին վիճակը, 25 դուրուշ ստորին կարգի համար տուրք սահմանած ժամանակին նկատողութեան չեն առած թէ 25 դուրուշ տը-

ւող չենք կրնար գտնել : Ըստ իս 5 դուրուշէն սկսելու է, եւ 5 դուրուշը տուողներ եթէ գտնելու ըլլանք գոհանալու ենք : Ինձ այնպէս կը թուի թէ ամենէն առաջ պէտք էր ստուգել Ազգին կարեաց հաւանական չափը տարին ծրագրին է . եւ այս հաւանական չափն որոշելէն ետեւ գուցէ 2 դուրուշէն սկսիլ հարկ պիտի ըլլար : եթէ մեք զայս չենք կրնար ընել, Պատրիարքարանն ու Վարչութիւնը կրնային հաւանական չափն որոշել, եւ երկու զրոյ տուրք սահմանելով հաւաքումն ալ շատ կը դիւրանար :

Դիտողութեանս մէկ կէտն ալ սա է . տարին երկու անգամ արոց պահանջման թուական դրուած է, ինձ կը թուի թէ աւելի զիւրութեան համար ոչ թէ երկու, այլ 5 եւ 4 անգամի բաժնելու է : Թողութիւն ըրէք, իմ տարիքս մարդիկ կան, որ ժամանակին Խորհուրտային, ասոնք լաւ գիտեն թէ 15 զրոյ ի համար որչափ մարդիկ քանի մ'ամիս բանտը պառկած են . այսպիսիներն եթէ 2 անգամէն 25 դուրուշ չկրնան տալ, 5 կամ 4 անգամէն պէտք է առնել : Այսպէսով մէկ կողմէ զիւրութիւն մը կ'ըլլայ վճարողաց համար, եւ միւս կողմէ ստացողաց համար յոյս մը :

Դիտողութիւն մ'ալ ունիմ քուէի իրաւանց տուրք սահմանուած ըլլալու մասին. գրուած է թէ առ նուազն 75 դուրուշ տուրք չտուողն ո՛չ ընտրող է եւ ո՛չ ընտրելի : Ես Եւրոպա գտնուած ատենս լսած էի թէ աղատասիրութեան ծայրայեղ սահմանը հասած են Կ. Պօլսոյ հայազգիք. սակայն հիմա այս համբաւոյն հակառակը կը գտնեմ. ես թէ որ 75 դուրուշ տուրք տալու անկարող եմ, ինչո՞ւ զրկուիմ քուէի իրաւունքէն :

ՉԱՏՆԵՐ. — Այդ ծրագրին սկզբունքը չէ . Սահմանադրութենէն առնուած է :

ՄԻՍԱՔԵԱՆ Խ. ԷՖ. — Ես ծրագրին մէջ տեսնելով անոր վրայ կ'ընեմ իմ դիտողութիւնս : Եթէ կարողութիւն չունիմ 75 դուրուշ վճարելու, իմ տկարութիւնս է այն . այս տկարութիւնս ինչպէս կրնայ իմ քուէի իրաւունքս կորզել ինձ :

ՉԱՏՆԵՐ. — Համամիտ ենք ձեզ յայտ մասին. սակայն վերաքննութեան անկ է որ եւ է փոփոխութիւն մ'ընել :

ՄԻՍԱՔԵԱՆ Խ. ԷՖ. — Մասնիկ մըն ալ կայ. կարծեմ Իփէկճեան էֆէնտին էր ըսած թէ ա-

նոնք որ անհոգութիւն ըրեր եւ ժամանակին չեն վճարեր իրենց տուրքը, գործով մը երբ Պատրիարքարան երթան վճարելու պիտի ստիպուին. ըսել է թէ ասոնք կերպով մը ծօղակը պիտի խցան, իսկ միւսները ծօղակը չպիտի բռնուին. այս կէտն ալ ազէկ չեմ տեսներ :

Վերջին մէկ դիտողութիւն մ'ալ ունիմ . ըստ որում Եւրոպայէն կ'առնուէք մեր Սահմանադրութիւնը, Եւրոպայի մէջ ոչ միայն եկեղեցականք, վարժապետք, այլ եւ անոնք՝ որ գեղարուեստից եւ գեղեցիկ դպրութեանց կը պարտապին եւ ընկերութեան համար սիրով եւ անձնուիրութեամբ կ'աշխատին, սիրով միայն կ'ապրին եւ տուրքէ ազատ են . ասոր խօսքն եղած չէ ծրագրին մէջ . քանի որ Եւրոպայէն կ'օրինակենք մեր օրինազիրքը, պէտք է որ այս կէտն ալ մեր օրինազիրքին մէջ անցունենք, որպէս զի գեղարուեստից պարտադր անձնք օրէնքով ազատ ըլլան ազգային տուրք վճարելէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Շահպաղեան էֆէնտինն է :

ՇԱՀՊԱՂԵԱՆ Ն. ԷՖ. — Ազգային արոց խնդրոյն ստիպողականութիւնը Սրբազան Պատրիարքին առաջարկութեամբ ժողովս ընդունելով, Քաղաքական ժողովին ներկայացուցած ծրագրին կարեւորութիւն տուաւ եւ յղեց Համարակալութեան զիւանին ի քննութիւն : Սոյն զիւանն իրեն յանձնուած պաշտօնը կատարելով, այժմ իւր բարեփոխութիւններով հանդերձ Քաղաքական ժողովոյ ծրագիրը կը վերադարձնէ ժողովոյս. այս բարեփոխութեանց մէջ կը տեսնենք որ ծրագրին մէջ բան եւկցնել հարկ եղած ատեն Համարակալութեան զիւանն ընդհակառակը բան պակսեցուցած է, այսինքն՝ գաւառական ազգային արոց վերաբերեալ յօդուածները դուրս թողեր է : Ըսել է որ Ազգային ժողովին ուրիշ բան չմնար, բայց եթէ կեդրոնական արոց վրայ եւ եթ խորհիլ եւ անոր կարգադրութիւնն որոշել, եթէ այսպէս ընենք, կարծեմ թէ քիչ ժամանակէ ետեւ նորէն արոց խնդիրը ձեռք առնելու եւ փոփոխութեան ենթարկելու պիտի ստիպուինք. վասն զի կեդրոնական տուրքը միայն Պատրիարքարանի պիտե՞ն հաւասարակշիւելու պիտի ծառայէ, վասն զի ազգայինք երբ մէկ կողմէ կեդրոնական տուրքը կեդրոնին համար տալու պիտի պարտաւորին, միւս կողմէ դարձեալ պիտի պարտաւորին իրենց գաւառին իրենց թաղին ոչ միայն

եկեղեցւոյն եւ դպրոցաց պէտքերը հողալ իրենց նուէրներովն, այլ եւ եկեղեցական հարցալ աւուր պարէնը հայթայթելու համար դանոնք մուրացկանութեան տակ դնել : Ներեցէք, այս խօսքս մասնաւորութեան վրայ չէ . ընդհանուրին վրայ կը խօսիմ : Քանի որ ժողովս այսքան ժամանակէ ի վեր աշխատութիւն թափելով այսօր հազիւ կարողացեր եւ յաջողեր է Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը ձեռք առնուլ, ես կ'առաջարկեմ որ արոց խընդիրն ալ հիմնական կերպով վերաքննուի եւ Ազգին նորաստուար կերպով հաստատուն արդիւնք մը իւրոյ բերէ . ըսել կ'ուզեմ, գաւառային եւ թաղային տուրքերն ալ նկատողութեան առնուին, եւ ինչպէս որ կեդրոնական տուրքը պիտի որոշուի, նմանապէս անկէ ծագեալ գաւառական եւ թաղական սնտուկներէն կեդրոնին համար առնուելիք տուրքերն ալ որոշուին, իւրաքանչիւրին բաշխման չափը սահմանելով . այն ատեն միայն Ազգն ընդհանուր խառնակութենէ մը պիտի կրնայ ազատիլ, թէ եւ հիմա զիւրին կ'երեւնայ մեզ մէկ երկու նիստի մէջ տուրքի խնդիրն որոշել . բայց ինչպէս ըսի արդէն, քիչ ժամանակէն զայն փոխխելու հարկը պիտի երեւան ելնէ : Աւստի իմ առաջարկութիւնս ամփոփելով կը կրկնեմ որ Ազգային ժողովն սպասէ մինչեւ գաւառային եւ թաղային տուրքերու վերաբերեալ ծրագիրներն ալ Վարչութեան կողմէ գան միանան ներկայ ծրագրին հետ, եւ ամենը մէկէն նկատողութեան առնուին :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ Վ. Ատենաբան էֆէնտին մուրացկանութեան խօսք մը ըրաւ եկեղեցականաց համար . արդեօք ինչ ըսել ուզեց :

ՇԱՀՊԱՂԵԱՆ Ն. ԷՖ. — Եկեղեցականները մուրացկան են բսել չուզեցի . անոնց իրաւանց պաշտպան կանգնելու նպատակաւ խօսեցայ եւ չէ թէ զանոնք անարգելու մտօք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Եկեղեցւոյ հիմնադիր Քրիստոս հաստատեց գանձանակը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը Քաղաքական ժողովոյ տեղեկաբեր Կոստանդ էֆէնտինն է :

ԿՈՍԱՆԻ Թ. ԷՖ. — Իփէկճեան եւ Շահպաղեան էֆէնտինները թաղային արոց նրկատմամբ կ'ըսեն թէ Վարչութիւնը պէտք եղած ծրագիրը բերէ . սակայն Սահմանադրութեան 91 գ. յօդուածը տարբեր տրամադրութիւն ունի այս մասին : Այժմ իւրաքանչիւր Քաղական խորհուրդ մէյմէկ սովորութիւն ու-



նի իւր ներքին պէտքերը մատակարարելու, եւ իւրաքանչիւրն իւր թաղին հանդամանաց համեմատ պէտք եղած միջոցը կը գործադրէ իւր ծախքը հողաւու համար: Այսպէս Վարչութիւնն ալ իւր ներքին ծախքերը պէտք է հողայ. եւ այս նպատակաւ ներկայ ծրագիրը շինեց եւ ներկայացուց. եթէ թաղերուն հողն ալ իւր վրայ առնու, գործերը կը շփոթին, ուստի աւելի խոնհուութիւն դատեց նախ կեդրոնական տուրքը կանոնի մը տակ գնել եւ փորձ մը ընել. եւ եթէ յաջողի յետոյ թաղերն ալ անոր հետեւելով կրնային նոյն փորձէն խրատեալ իրենց տուրքերը նոյն կանոնին վերածել:

Գաւառներէն կեդր. անուակին արուելու սովորութիւն եղած արոց բաշխման եւ հաւաքման եղանակը Սահմանադրութեան 90-րդ յօդուածին նայելով Ազգային ժողովը պիտի որոշէ. ուստի գիտնալու համար թէ իւրաքանչիւր գաւառ ինչպէս բաշխու պիտի ընէ, օրինակի համար Կարին օրչափ եւ Վան օրչափ տուրք տալու կարող են, այս կէտը մեր ծրագրին մէջ անցուցինք. ռակայն շահարակալութեան զիւանն աւելորդ սեպելով դուրս հաներ է. այս կէտին վրայ ես ալ չեմ պնդեր, Քաղաքական ժողովն ալ չպնդէր, զեռ ժամանակ ալ կայ, Վարչութիւնը կրնայ խորհիլ այդ կէտին վրայ:

Տուգանքի կէտին գալով, Իփէկճեան էֆէնտիի զիտողութեանը կը պատասխանեմ թէ ըստ որում մեր ազգային Վարչութիւնը բարոյական իշխանութիւն մ'է, եւ չկրնար տուրք շաւոռներէն բռնի առնուլ, անոնց չտալովն ալ կեդրոնական սնտուկը ներքութեան մէջ կ'ընայ, եւ Վարչութիւնը պիտեճէին համեմատ իւր ծախքերը պիտի ընէ, հարկաւ բաց պիտի ունենայ եւ զայն գոցելու համար տոկոսաւոր փոխառութեան պիտի դիմէ. ուստի այս պատճառներով Վարչութիւնը մտածեց տուգանք մը գնել, որ կարծուածին չափ ծանր չէ, այլ շատ թեթեւ է, եւ եթէ տուգանք չըլլայ, տարիներով ետ կը ձգեն արոց վճարումները, եւ Կեդր. սնտուկը չկրնար ներքութեանէ ազատիլ: Հետեւապէս Վարչութիւնն այս կէտն ստիպողական եւ անհրաժեշտ համարելով կը պնդէ անոր վրայ:

Նոյնպէս Միտաքեան էֆէնտիի զիտողութեանը գալով. նախ կ'ըսէ թէ ստորին կարգի գաւառ 25 դուրուշ տուրքը չաա է, եւ թէ

պէտք է 2 կամ 3 դուրուշ ըլլալ: Այս մասին կը պատասխանեմ որ արդէն ծրագրին մէջ վաստակի տէր եղող անձինքը պիտի վճարեն ըսուած է. յայտնի է որ Պօլսոյ մէջ արհեստ չունեցող մէկն անգամ կրնայ օրն 8 դուրուշ վաստակիլ. այս 8 դուրուշէն տարին 25 դուրուշ պիտի տայ, ըսել է ամիսն 2 դուրուշի կուգայ. եթէ կարողութիւն չունի, աւելի աղէկ է բնաւ տուրք չառնուլ, քան թէ 2 դուրուշ առնուլ եւ ծախք ընել հաւաքիչ զրկելով եւն: Երկրորդ՝ կ'ըսէ թէ փոխանակ տարին 2 անգամով առնելու 4 անգամով առնուի. ասիկա գաղափար մ'է, զոր ամեն մարդ մէյմէկ կերպ կրնայ մտածել: Յիրաւի 2 անգամին տեղ 4 անգամով առնուելուն մէջ արուողին կողմէ աւելի զիւրութիւն կըլլայ. բայց հաւաքման եղանակն ալ մտածել պէտք է, զժուար կ'ըլլայ 4 անգամ երթալ մէկ անձին, աւելի պաշտօնեայ պէտք է, երթեւեկութեան համար ծախք պէտք է. ասոնք մտածելով 2 անգամով վճարումը քիչ չէ. վեց ամսէ վեց ամիս որ եւ է մէկը կրնայ 10 դուրուշ տալ: Երրորդ՝ կ'ըսէ թէ ինչու համար ընտրական իրաւանց վրայ 75 դուրուշ տուրք սահմանուած է: Այս կէտն որովհետեւ Սահմանադրութեամբ որոշուած է, Վարչութիւնը չկրնար փոփոխել. եւ եթէ փոփոխել հարկ ըլլայ վերաքննութեամբ միայն կրնայ ըլլալ: Վերջապէս՝ կ'ըսէ թէ գեղարուեստից պարապող անձինք պէտք է ազատ ըլլան օրինօք ազգային տուրքէն: Օրէնքը կը տրամադրէ որ եթէ վաստակի եւ շահու տէր են, պէտք է մասնակցին ազգային ծախուց. ասոր համար Վարչութիւնը պատշաճ չէ դատած բացառութիւններ ընել:

Մինչեւ հիմա եղած զիտողութեանց վրայ այսչափ է մեր պատասխանը: Իսկ շահարակալութեան զիւանին կողմէ առաջարկուած փոփոխութեանց գլխաւոր կէտին վրայ այժմ համաձայնեցանք, ինչպէս որ նոյն զիւանի տեղեկարներ էֆէնտիին պիտի բացատրէ ժողովոյդ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Տուգանքի կէտին վրայ խօսք կ'ուզեմ:

ՋԱՅՆԵՐ.— Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կարծեմ թէ խօսք ուղղներն ոչ թէ ծրագրին ընդհանրութեանը վերայ, այլ յօդուածոցը վրայ խօսիլ կ'ուզեն: Ուստի նախ պէտք է հարցնեմ ժողովին թէ կուզէ արդեօք ծրագրին ընդհանրութեանը վը-

րայ վիճարանութիւնը գոցել եւ յօդուածոց վիճարանութեանն անցնիլ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Եթէ ընդհանրութեան վրայ վիճարանութիւնը պիտի դադրի, խօսքս ետ կ'առնում:

Ատենապետ էֆէնտիի դրաւ, եւ ժողովը 1 ձայնի դէմ 28 ձայնով Տրոց ծրագրին ընդհանրութեանը վրայ վիճարանութեան փակվին ընդունելով, յօդուածոց վիճարանութեանն անցնիլ ՈՐՈՇԵՑ:

Ատենի փակման ժամը հասած ըլլալով թէ Տրոց ծրագրին յօդուածոց վիճարանութիւնը եւ թէ Օրակարգին մէջ գտնուած միւս եր-

կու խնդիրները յաջորդ նիստին թողուեցան. եւ Գիւանին առաջարկութեան վրայ միաձայնութեամբ ընդունուեցաւ ներկայ նիստին Օրակարգն անփոփոխ պահել:

- Հետեւապէս ժողովն ՈՐՈՇԵՑ յաջորդ նիստը 15 օրէն գումարել ըստ յետագայ Օրակարգի.
1. Ծրագրի ազգային տրոց:
  2. Կալուածոց զիւանի տեղեկագիրը ազգային վանօրէից համարառութեանը վերաբերեալ:
  3. Փոփոխելի տրամադրութիւնք Սահմանադրութեան. — Վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագիրը:

Ատենը փակուեցաւ ժամը 10 ին:

ԱՏԵՆԱՊԵՏ Ք. Գ. Գ. ՓԱԺԱՆՍԵՅ  
 ԱՏԵՆԱՊԵՏ ԹՈՒՈՒՆԵԱՆ





ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորէն	Եպիսկոպոս	Նար-պէյ	ԱՏԵՆԱԳԵՏ
2. Տ. Խորէն	Վ.	Կիրոյեան	ԱՏԵՆԱԳՊԻՐ
3. Տ. Ամբրոսիոս	»	Իսկէնտերեան	
4. Տ. Գէորգ	»	Գերձակեան	
5. Տ. Չաքարիա	»	Չիւմրի թճեան	
6. Տ. Կարապետ	»	Սերոբեան	
7. Տ. Յովնանէս	»	Փափազեան	
8. Տ. Ներսէս	»	Ասլանեան	
9. Տ. Արիստակէս	Ք.	Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	»	Արամեան	
11. Տ. Գրիգոր	»	Աճէմեան	
12. Տ. Երեմիա	»	Խասգիւղի	
15. Տ. Սուքիաս	»	Ստեփաննոսեան	
14. Տ. Վրդանէս	»	Միջագիւղի	

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մաքսուտեան	պէյ	ԱՏԵՆԱԳԵՏ
2. Միքայէլ	Մամիկոնեան	էֆէնտի	ԱՏԵՆԱԳՊԻՐ
3. Արրահամ	Հարենց	»	
4. Ասաիա	Եկիտպաշեան	»	
5. Խաչիկ	Ալեանաքեան	»	
6. Կարապետ	Բարազեան	»	
7. Մկրտիչ	Էսաեան	»	
8. Յակոբ	Կոստանդ	»	
9. Յարութիւն	Գափամաճեան	»	
10. Սարգիս	Արրահամեան	»	
11. Սարգիս	Արապեան	»	
12. Սիմոն	Միքայէլեան	»	
15. Սիմոն	Նորատունկեան	»	
14. Կանիան	Խնդիրեան	»	





ՄԱՍԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1	Մատենադարանի Գրքեր	1-2
2	Մատենադարանի Գրքեր	3-4
3	Մատենադարանի Գրքեր	5-6
4	Մատենադարանի Գրքեր	7-8
5	Մատենադարանի Գրքեր	9-10
6	Մատենադարանի Գրքեր	11-12
7	Մատենադարանի Գրքեր	13-14
8	Մատենադարանի Գրքեր	15-16
9	Մատենադարանի Գրքեր	17-18
10	Մատենադարանի Գրքեր	19-20
11	Մատենադարանի Գրքեր	21-22
12	Մատենադարանի Գրքեր	23-24
13	Մատենադարանի Գրքեր	25-26
14	Մատենադարանի Գրքեր	27-28
15	Մատենադարանի Գրքեր	29-30
16	Մատենադարանի Գրքեր	31-32
17	Մատենադարանի Գրքեր	33-34
18	Մատենադարանի Գրքեր	35-36
19	Մատենադարանի Գրքեր	37-38
20	Մատենադարանի Գրքեր	39-40
21	Մատենադարանի Գրքեր	41-42
22	Մատենադարանի Գրքեր	43-44
23	Մատենադարանի Գրքեր	45-46
24	Մատենադարանի Գրքեր	47-48
25	Մատենադարանի Գրքեր	49-50
26	Մատենադարանի Գրքեր	51-52
27	Մատենադարանի Գրքեր	53-54
28	Մատենադարանի Գրքեր	55-56
29	Մատենադարանի Գրքեր	57-58
30	Մատենադարանի Գրքեր	59-60
31	Մատենադարանի Գրքեր	61-62
32	Մատենադարանի Գրքեր	63-64
33	Մատենադարանի Գրքեր	65-66
34	Մատենադարանի Գրքեր	67-68
35	Մատենադարանի Գրքեր	69-70
36	Մատենադարանի Գրքեր	71-72
37	Մատենադարանի Գրքեր	73-74
38	Մատենադարանի Գրքեր	75-76
39	Մատենադարանի Գրքեր	77-78
40	Մատենադարանի Գրքեր	79-80
41	Մատենադարանի Գրքեր	81-82
42	Մատենադարանի Գրքեր	83-84
43	Մատենադարանի Գրքեր	85-86
44	Մատենադարանի Գրքեր	87-88
45	Մատենադարանի Գրքեր	89-90
46	Մատենադարանի Գրքեր	91-92
47	Մատենադարանի Գրքեր	93-94
48	Մատենադարանի Գրքեր	95-96
49	Մատենադարանի Գրքեր	97-98
50	Մատենադարանի Գրքեր	99-100

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՂՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ճախուշի ի Գիշանաւան Պատրիարքարանի , և Ղալարիո Ս. Լուսաւորիչ Եկեղեցոյ բանկայր և Հայ գրաւիւմարաց քի :